



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերմագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

զբառանել և տարածել կոպիը ցանկացած մեաչափով կամ կրիչով
մեափոխել կամ օգտագործել առկա կոպիը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

V Unten. 24

50

203
6-77

2000

Առնչուկ
50 48.

220 ԵՐԳՆԵՐԱՅ

232



468-ԿԿ և ԳԵՐՈՒՆԵՐ

ԳԵՒԹԻ ՍԵՂՍՈՐՆԵՐ

003

2 հիւս

ԵԻ

ԵՐԳՆԵՐԱՅ



1952
2561

ԵՐԿՐՈՐԴ ՏԻՊ



1857

30005-47

1.850

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
1955

50-2002

(14050-58)

ՆՕՆՈՒՅՈՒՄ

Ն^օ գրքոյկին յօրինուելուն առաջին և գլխաւոր նպատակը ան է որ՝ թէ հրապարակաւ և թէ առանձին երգելու համար գործածուի : Յիրաւի յուսալի է որ Վրիստոնեաները ասիկայ առանձին կարգալով ալ հոգեւոր շինութիւն մը ստանան, բայց նոյն ժամանակը աս ալ մտնալու չէ որ՝ սոսկ կարգացուելու համար շինուած քերթուած մը չէ : այլ Սաղմոսներու և Հոգեւոր Երգերու գրքոյկ մը՝ Նստուծոյ պաշտօն մատուցուելու ատենը երգուելու համար :

Վեզուն՝ Դարաւոր եղածին չափ այժմեան պարզ աշխարհաբան է, որպէս զի ամէն մարդ կարող ըլլայ հասկընալու : Եւ շտերը՝ եղանակներուն յարմարցուած են, երաժշտական կանօնին համեմատ : Նս բանը կարելի է որ երբեմն լեզուին ոճը օտար և անսովոր երևցունէ, բայց ընթերցողը յիշելու է թէ՛ երաժշտական կանօններուն պահանջմանը յարմարելու համար անանկ եղած է :

Սաղմոսները՝ ամբողջ Կաւթի Սաղմոսնե-
րուն տաղաչափութիւնը չէ, այլ շատ 'Հա-
մառօտուած ըլլալով՝ նիւթը միայն բնա-
գիրէն աճուած է, և անանկ ձեւի մը դը-
րուած է որ՝ ամենէն յարմար և օգտակար
կերպով գործածուի Արքարանին փառարա-
նութեանցը մէջ :

Ըսէն մէկ Սաղմոսին և Ներգին սկիզբը
գրուած նիւթին կամ վերնագիրին քովի փա-
կագիծով թուանշանները, տողերուն մէջի
փանկերը կը ցուցունեն. զոր օրինակ (8), կը
նշանակէ թէ նոյն սաղմոսին կամ երգին բո-
լոր տողերը ութնական փանկ կը պարունակեն.
և (8 + 6), կը նշանակէ թէ մէկզմէկու
ետե մէկ տողը ութը և միւսը վեց կը պա-
րունակեն, և այլն : Ետիկայ՝ յարմար եղա-
նակ մը ընտրելու գիւրութիւն կու տայ :

Նրանի՛ թէ բոլոր աս գրքոյկը գործածող-
ները՝ կարող ըլլան սերգել Հօգիով ու մը-
տառութեամբ" :

Ս Ե Ղ Մ Ո Ս



1 Ըարէ խորոց երջանիւ-լիւնը և շա-
րերուն լշուտու-լիւնը . (8) :

1 Օր'նեալ է ան որ շը գնաց ,
Մնկրօններուն շար խորհուրդին .
Գէմ գնելով ամարշտաց ,
Մերժեց աստուծոն նենգաւորին :

2 Գիշեր ցորեկ կը մտածէ ,
Տերօջը սրբազան օրէնքն .
Մարդոց գիւտերն կ'արհամարհէ ,
Ար կառարէ Տերօջը կամքն :

3 'Աման է ան կանաչ ծառին ,
Որ ջուրերու քով է բուսած .
Գտուղ կու տայ իր ատենին ,
Ու միշտ գործքերն են յաջողած :

- 4 Բայց թշնամիք սուրբ օրինաց ,
 Իբրև փոշի պիտի ցրուին .
 Եւ ապրստամբք Տէրոջ կամաց ,
 Ընոր դէմքէն կը կորսուին :

Ս Ի Ե Բ Գ Ս

- 2 Վ.բխսոսէ հասարակ Լագուարու
 Լիւնը . (10) :

- 1 Ինչո՞ւ անհաւատք վէճեր կը հանեն ,
 Ու փուճ բաներու միշտ խելք տուեր են .
 Ինչո՞ւ թագաւորք իրենց հաւնող են ,
 Եւ միշտ կամքերնին ընել կը փնտռեն :
- 2 Իշխանք ժողովուած աս կը մտածեն ,
 Տէրոջն ()ծնալին դէմ , և կը զրուցեն .
 “Կոտրենք ջախջախենք անոնց կապերը ,
 Սեզմէ վերցընենք անոնց լուծերը” :
- 3 Բայց Հայրն երկնաւոր անոնք կ’անարգէ ,
 Ու բարկանալով անոնց կը զրուցէ .
 “Իմին թագաւորս որ ձեզ օժեցի ,
 Սուրբ Սիօն լեռանս վերայ կը նստի :
- 4 Խնդրէ դուն ինձմէ Արդի սիրական ,
 Բոլոր ազգերուն ժառանգ քեզ ընեմ .

Երկրին ծայրերը քեզի թող ըլլան ,
 Մինակ իշխելու ես քեզ հաստատեմ" ։

5 Ըրդ՝ լաւ հասկըցէք ո՛վ թագաւորներ ,
 Խըրատ առէք դուք ո՛վ դատաւորներ .
 Տերօրը վախով միշտ ծառայեցէք ,
 Երկիւղածութեամբ ան մեծարեցէք ։

6 Արդւոյն Լսաուծոյ հընազանդեցէք ,
 Ար չը կորսուիք դուք աս ձեր ճամբան .
 Օգոյշ միշտ եղի՛ք չը բարկացընէք ,
 Երնեկ անոնց որ անոր կը յուսան ։

3 Լսաուծ հըր ապուհէնը . (8) ։

1 Տէր՝ թշնամիքս են անհամար ,
 Եւ շատ մարդիկ զիս կը նեղեն .
 Եւ ատերն կ'ըսեն ինձի համար ,
 "Չիք փրկութիւն քեզ Լսաուծմէն" ։

2 Լայց դուն ո՛վ Տէր օգնես ինձի ,
 Եւ իմ գըլուխս՝ բարձրացընես .
 Չայնովըս ես՝ Տէրն կանչեցի ,
 Ինձ սուրբ լեռնէն պատասխանեց ։

- 3 Ես քրնացայ Վե արթընցայ ,
 Վանդի Մատուած զիս պաշտպանեց .
 Են իս պահեց , ու չը վախցայ
 Չարաց խուժքէն որ զիս պատեց :
- 4 Ելի՛ր ո՛վ Տէր՛ ո՛վ Մատուած իմ ,
 Օջորկ թշնամիս և իս փրկէ .
 Ես քու Խօսքիդ կ'ապաւինիմ ,
 Եննգաւորաց ահոան փշոէ :
- 5 Տէր՛ փրկութիւնն կու գայ քեզմէ ,
 Սիայն քեզմէ ան կը խնդրեմ .
 Սուրբ օրհնութեամբդ դուն իս օրհնէ ,
 Օ, ի ես անոր շատ կարօտ եմ :

4 Եստուծոյ յոստալն էնր . (8) :

- 1 Ո՛վ Տէր Մատուած արդարութեան ,
 Մաղթողական ձայնիս լսէ .
 Երբ քեզ կանչեմ տուր պատասխան ,
 Եեղութենէս իս ազատէ :
- 2 Սինչև երբ դուք որդիք մարդկան ,
 Պիտի սիրէք շար ստութիւն .
 Տէր մեզ եղիբ միշտ պահապան ,
 Ու տուր մեզնի քոյդ փրկութիւն :

3 Սասանեցէք մեզք մի՛ գործէք ,
 Օգնում ըրէք բոլոր սրտով .
 Ճշմարտութեան հետեւեցէք ,
 Հաստատուեցէք Տէրոջն յուսով :

4 Հաւերն կ'ըսեն միշտ անդադար ,
 Ո՛վ տայ պիտի մեզ բարութիւն .
 Տէր՝ ցոյց մեզի երեսդ պայծառ ,
 Եւ տուր մեզի խաղաղութիւն :

5 Ուրախութիւն տուիր սրտիս ,
 Խաղաղութեամբ պիտի պառկիմ .
 Միայն քեզմով Տէր բոլորից ,
 Ես ապահով աս տեղ կ'ապրիմ :

5 'Եւդեալ հասարացեալն ազօ՛րդ .
 (10) :

1 Ո՛վ մեծ թագաւոր Փրկիչ Տէր Մ.Ճս ,
 Մկանջ դիր ձայնիս և աղաչանացս .
 Մէն առտու ես պիտի քեզ օրհնեմ ,
 Մէն բարութիւն քեզմէ կ'սպասեմ :

2 Օ՛ի դուն չարութիւն սիրող Մ.Ճ չես ,
 Մնօրէնութիւն գործողը կ'ատես .
 Չար ճարդն երեսեդ պիտի հալածուի ,
 Հպարտն քու առջիդ պիտի չը կայնի :

3 Ըձեն ստախօս կը կորսնցընես ,
 Խաբող մեղաւորն գըժոխք կը խրկես .
 Բայց ինձ գթութեան քու դուռըդ բացիր ,
 Եւ մեծ շընորհքներ ինձ պարգևեցիր :

4 Ես ալ քու վախովդ՝ տաճարդ կը մտնեմ ,
 Վուկին Սք Խօսքիդ ականջ կը դնեմ .
 Դուն ճշմարտութիւնդ ինձ առաջնորդէ ,
 Վուկին սք ճամբադ առջիս Տէր շիակէ :

5 Վեզի յուսացողն ուրախ թող ըլլայ ,
 Դուն ան պաշտպանէ որ անբոյժ մընայ .
 Ընտնք որ քու սուրբ անունդ կը սիրեն ,
 Վեզմով անվախճան փառք թող ժա-
 ուանգեն :

6 Հիւանդութեան հըզ ուղօրէ՛ . (8) :

1 Տէր մի շեխեր բարկութիւնով ,
 Օխ մի՛ խրատեր սրդողելով .
 Մեղաւորիս Տէր ողորմէ՛ ,
 Հիւանդ եմ ես դուն ինձ օգնէ :

2 Օխ բըժշկէ Ըստուած գթած ,
 Ըձեն ոսկորս է սասանած .
 Դարձիր ով Տէր հոգիս փրկէ ,
 Ողորմութեամբ մեղքերս քաւէ :

3 Ես յոգնեցայ հառաչելով ,
 Ըմեն գիշեր սրտանց լալով .
 Ըստա արցունք ես թափեցի ,
 Խոլոր մահիճըս թրչեցի :

4 Իմ աղօթքիս Ըստուած լսեց ,
 Խոլոր մաղթանքս՝ Տէրն ընդունեց .
 Թող ամենան և սարսափին ,
 Թշնամիներս՝ բոլորովին :

5 Ըմօթ թող կրեն և եա կայնին ,
 Ընտք որ ինձ վրնաս տուին .
 Ըստուածային ողորմութեան ,
 Թող միշտ արուի փառք գովութեան :

7 Թշնամեաց զէ՛մ աղօթք . (8) :

1 Ո՛վ Տէր Ըստուած արդարութեան ,
 Դուն ես յոյս իմ և օգնական .
 Փրկէ զես արդ նեղիշներէս ,
 Օ՛րս հալածող սոսիսներէս :

2 Ելի՛ր ո՛վ Տէր բարկութիւնով ,
 Իմ թշնամեացս դէմ զիր ուժով .
 Շուտ արթընցիր ինձի օգնէ ,
 Դատաստանի հրաման ըրէ :

3 Ես զարմանքով յայնժամ կ'ըսեմ ,
 Մարգն ո՞վ է Տէր որ դուն յիշես .
 Ըրդեօք այնչափ է մարդ վըսեմ ,
 Ար դուն անոր միշտ այց կ'ընես :

4 Քանզի դուն ան պըսակեցիր ,
 Իբրու պատուով հընչտակային .
 Ա երակացու դուն ան դբիր .
 Չնուագործիդ բոլոր երկրին :

5 Ընոր հնազանդ եղու արզառ ,
 Չուկեր ծովուն , թաշուն , գազան .
 Ըստուած Տէր մեր՝ ինչ մեծափառ .
 Լ : քու անունդ երկրի վըրան :

9 Թշնուհաց խըսպէտնը համար զառա-
 քանուլին . (10) :

1 Տէր քեզ գոհու՛մի և փառք պիտի տամ ,
 Խոլոր իմ սրտովս՝ քանի որ ողջ կամ .
 Քու սուրբ օրէնքներդ պիտի քարոզեմ ,
 Աքանչելիքներդ պիտի միշտ պատմեմ :

2 Քեզմով միայն ես Տէր միշտ կը խնդամ ,
 Խարձրեալ Ե. Մ դ միշտ փառք պիտի տամ .

Օ՛ր դուն ուղղութի՛ք իմ դատըս տեսար ,
 Ըթո՛ւ նստելով Աստուղ ես արդար :

3 Կըռոց ծառայօղ ազգերն պատժեցիր ,
 Ընոնց անուններն անգամ ջնջեցիր .
 Ժողով թշնամեաց շուտով աւրեցաւ ,
 Ընոնց յիշատակն երկրէս վերջացաւ :

4 Բայց Տէրն կը մնայ մինչև յաւիտեան ,
 Ըթո՛ւն պատրաստեց ըրաւ դատաստան .
 Քանզի չես թողուր ո՛վ Տէր փրկութեան ,
 Օ՛ւնոնք որ քեզի մինակ կը յուսան :

5 Ընոնք՝ Տէր որ քու անունդ կը ճանչնան ,
 Քեզի կը յուսան քեզմէ կը վախնան .
 Տնանկ ազքատին կ'ըլլաս ապաւէն ,
 Պաշտպան նեղելոց անոնց նեղ ատեն :

10 'Նեղութեան Տէր աղօլէր . (8) :

1 Ո՛վ Տէր ինչու՞ հեռուն կեցար ,
 Իմին ցաւոցս չը նայեցար .
 Լըսէ իմին հառաչանացս ,
 'Դուն ես յոյս իմ փրկիչ Աստուածս :

- 2 Ըմբարիչաներն գոռոզաբար ,
 Կը հալածեն զաղքատն անկար .
 Թող կործանին յանկարծ շուտով ,
 Իրենց խորհած խորհուրդներով :
- 3 Մեղաւորներն անխղճմըտանք ,
 Հանկու թիւնին կ'ընեն պարծանք .
 Պատիւ կու տան անաստուածին ,
 Օրկող , ագազ անձնասիրին :
- 4 Օ՛խ շար սիրող մարդ խիղճ չըներ ,
 Եւ իր Վրկիչն չը փնտրուեր .
 Եւ իր մտքովն է համոզուած ,
 Թէ չի՞ք Լստուած քննիչ մեղաց :
- 5 Գաղտուկ տեղուանք դարան գործեց ,
 Իբրև զառիւծ յափշտակեց .
 Օ՛խ նա ըսաւ Տէրն կը մոռնայ ,
 Երես դարձուց որ չը տեսնայ :
- 6 Ելի՛ր ո՛վ Տէր և վեր վերցուր ,
 Ընդ զօրաւոր , և զա՛րկ անօր .
 Տնանկ աղքատն դուն մի՛ մոռնար ,
 Որ քեզ փառք տայ յաւէժարար :

11 Լուսաբան զէր զի հայն յոյսը • (8 • 6) :

1 Դուն մեծ փրկիչս իմ յոյսըս ես •

Ինչպէս կ'ըսեն ինծի ,

Վաւ լեռդ թռչէ թռչնոյ մը պէս ,

Հանգիստ գտնես քեզի :

2 Վանգի ահա մեղաւորներ ,

Ըղեղը լարեցին •

Որ նետերնին մթին տեղեր ,

Նետեն ուղղասրտին :

3 Տէրն կը քննէ զմարդ արգար ,

Սիրող ճշմարտութեան •

Իայց իր հոգին կ'առէ մարդ չար ,

Սիրողը բռնութեան :

4 Չարաց վըրայ պիտի թափուի ,

Կըրակ ծծմբափառ •

Իայց արդարոց պիտի տրուի ,

Պըսակ լուսապայծառ :

12 Չարէրուն պարձանէր ունայն է •

(8 • 6) :

1 Օխ ազատէ փրկէ ով Տէր ,

Վանգի սուրբ չը մընաց •

Հաւատացեալ Մատուածաւեր,
Սարդոց մէջ է պահուած :

2 Ամեն մարդիկ սուտ կը խօսին,
Իրենց բնկերներուն .
Շողոքորթող պահուեք ունին,
Խաբող ագէտներուն :

3 Տէրն կը կարէ շողոքորթաց
Լեզուն՝ շարիք խօսող .
Արոնք ըսին ո՞վ է Մատուած,
Լեզուով կ'ըլլանք յաղթող :

4 Եղբաւներուն միշտին համար,
Կ'եղբւ՛մ, կ'ըսէ Մատուած .
Կ'ըլլամ՝ Փրկիչ ազատարար,
Արոնց որ են խաբուած :

5 Ո՞վ Տէր Մատուած դուն պաշտպանէ,
Ամենքս առ շար ազգէն .
Վու որէնքներդ մեզի յայտնէ,
Որ մեզ առաջնորդեն :

13 Թշնամեաց գէմ աղօթք . (8) :

1 Մինչև երբ զես ո՛վ Տէր Աստուած
Բողորովին պիտի մտնաս .

Մինչև երբ Տէր պիտի ծածկես
Ինձմէ երեսդ ամենատես :

2 Մինչև երբ Տէր պիտի տանջեն
Սրտիս ցաւերն ամէն ատեն .

Մինչև երբ Տէր իմ Թշնամիս
Պիտի զնէ գէմ իմ անձիս :

3 Եայէ ինձի Փրկիչ Աստուածս ,
Մտիկ ըրէ պաղատանացս .

Լոյս տուր խմին աչուրներուս ,
Ար չը ննջեմ քընովն անյոյս :

4 Աղորմութեանդ ես յուսացայ ,

Աիրտս փրկութեամբդ պիտի ցնծայ .

Պիտի տամ քեզ փառք անդադար ,

Աստուած Փրկիչս Տէր բարեբար :

14 Մարգարէի մատուցած Անճախ . (8) :

1 Խենթ անզգամ մարգիկ ըսին ,

Չըկայ Աստուած և Տեսութիւն .

Լ՛մենքն ալ պիղծ գործեր ըրին ,
Չըկայ ընող աղէկութիւն :

2 Տէրն նայեցաւ յերկնից յաշխարհ ,
Խոյր մարդոց որդիներուն .
Տեսնէ թէ կայ մէկ հատ արդար ,
Լստուած խնդրող մարդ իմաստուն :

3 Լ՛մեն մարդիկ մոյրեցան ,
Եւ պիղծ եղան բոլորովին .
Մարդ հետեող ճշմարտութեան ,
Եւ բարեպաշտ չը կայ բնաւին :

4 Չար մարդիկներ և անօրէն ,
Խորհուրդ չունին , ու չեն գիտեր .
Հացի նման իմ ազգս կ'ուտեն ,
Եւ Տէր Լստուածն ալ են մոռցեր :

5 Ո՛հ երանի թէ Սիօնէն
Կար փրկութիւն Իսրայէլի .
Տէր մեզ փրկէ գերութենէն ,
Եղատութիւն շնորհէ մեզի :

15 Երբ որ լինի . (8 . 6) :

1 Քու սրբարանդ ո՛վ Տէր երկնի ,
Ո՞ր մարդ պիտի կենայ .

Կամ որ էակ հոն բընակի ,
Վու սուրբ լեռանդ վերայ :

2 Ըն որ անսեղ կեանքով կ'ապրի ,
Բարեգործութիւնով .
Ճշմարտութիւնը կը խօսի ,
Սրտով և իր բերնով :

3 Ըն որ լեզուով չը զրպարտեր ,
Չարիք մեկուն չընէր ,
Իր ազգականն չը նախատեր ,
Ընկերն չը վընասեր :

4 Չարերն կ'ատէ լուն կը յարգէ ,
Ըրած երգումն չարեր ,
Ո՛վ որ բոլոր ասոնք կ'ընէ ,
Չարիք մը չը տեսներ :

16 Հասարակութեան Ըրող-ձոյ կ'ապա-
նէ . (12) :

1 Լուն զիս պաշտպանէ և պահէ իմ
Ըստուածքս ,
Վանդի ես միայն քեզի յոյսըս գրեր եմ .

Գուն եւ պահպանու Տէր Աստուած իմ
 Փրկիչը ,
 Սխայն քեզմէ Տէր բարութեանս սպասեր
 եմ :

2 Տէրն է իմ բաժինըս եւ ժառանգութիւնըս ,
 Եւ ինձ շնորհող վայելած բարիքներըս .
 Ինքը ամէն ներգութենէն իս փրկած է ,
 Ամէն բարիքներ յաւիտեան ինձ պահած է :

3 Իբաւ երջանիկ վիճակներ ինձ եղած են ,
 Ժառանգութիւններս երջանիկ ինձ եղած են .
 Պիտի շնորհակալ ըլլամ Տէր քու շնոր-
 հացրդ ,
 Երիկամունքներս ինձ կու տան քու
 խրատներդ :

4 Ամէն ժամանակ Տէրն արթնոյրս դուրս եմ ,
 Սխայն անոր եւ յարմարեցի քոմէն կեանքըս ,
 Ամէն փորձանքէս իմ օգնութեանս անտանան
 եմ :

Քանզի նա ինքն իր յոյսս վաշտապիս իմ արդ
 կողմէս :

2



2002-05
 50-2002
 (62561)
 1004
 19523
 14050-58X

5 Կենաց ճամբաներ ցոյց տալու խոստացած
ես ,

Եւ քու Սուրբ Խօսքիդ պայծառ լոյսն
վրաս ծագած է •

Ընթիւ հաճութիւն երկնից մէջ պատ-
րաստած ես ,

Որոնք քու անհուն բարութիւնդ մեզ
շնորհած է :

17 Հոգոյն Սբէոյ աստընորդութեանը
համար աղօլէ • (8) :

1 Երդարութիւնն ո՛վ Տէր լսէ ,

Եղաղակիս մտիկ ըրէ •

Ընենեզ լեզուով քեզ կ'աղաչեմ' ,

Ուղիղ սրտով աղօթք կ'ընեմ' :

2 Իմ քայլերուս եղիբ պաշտպան ,

Որ ճամբուդ մէջ հաստատ մնան •

Ոտքերս բընաւ չք խոտորին ,

Սուրբ օրէնքիդ միշտ հետեին :

3 Ողորմութիւնդ սքանչելի ,

Սիրոյդ համար ցուցուր ինձի •

Փրկէ աջովդ զիս սոսիսէն ,

Իմ յոյս դուն ես ամէն ատեն :

4 Եւքի բիրի պէս զիս պաշէ ,
 Թեւերուդ տակ միշտ իս ծածկէ .
 Օ, իս ազատէ նեղիչներէն ,
 Ար իմ հոգիս կը պաշարեն :

5 Եւնոնք գիրցան հարուստ եղան ,
 Հպարտութեամբ միշտ խօսեցան .
 Եւրդ աչքերնին ինձ կը տնկեն ,
 Եւանկ որ զիս գետին զարնեն :

6 Ելիւր ո՞վ Տէր տես թշնամին ,
 Եւզին կարէ ու զարկ գետին .
 Հոգիս փրկէ անգգամէն ,
 Քու սուրբ Խօսքովդ աստուածեղէն :

18 Փառաբանո՞ւիւն աւ Եստուած , եր
 պաշարպանո՞ւիւնը համար . (10) :

1 Պիտի սիրեմքեզ Եստուած իմ փրկիչ ,
 Քանզի դուն միայն ես ինձ զօրութիւն .
 Տէրն է ինձի վե՛մ՝ պարբիսպ ազատիչ ,
 Աւհան՝ ապաւէն՝ յոյս և փրկութիւն :

2 Չորս զիս պատեցին շարիք ու վեշտեր ,
 Վե՛շ որոգայթներ առջիս կտրեցին .

Եւ քեզ մատուցի աղօթքըս ո՛վ Տէր ,
Հասաւ աղաղակս Տէրոջս ականջին :

3 Խրկեց Տէրն բարձրէն և զիս ինք բունեց :
Հուսով աղաակեց զիս շատ ջուրերէն .
Օջորեղ թշնամեաց ձեռքէն զիս փրկեց ,
Օյիս լայն տեղ հանեց զի գոհ է ինձմէն :

4 Տէրն է կենդանի Փրկիչըն մարդկան ,
Ըն իմ վեճըս է օրհնեալ միշտ ըլլայ .
Ըստուած փրկութենս որ է ինձ պաշտպան ,
Ս'ինչև յաւիտեան փառքով բարձրանայ :

5 Թշնամիներէս Տէր դուն զիս փրկէ ,
Վեզմով յաղթեցի ամէն թշնամեաց .
Սաղմոս երգելով լեզուս քեզ գովէ ,
Ժողովուրդներուն մէջ հեթանոսաց :

19 Ըստուած իր ամէն գործերու՛ն ի
տարեալ է . (8) :

1 Երկինք պատմեն Տէրոջ փառքերն ,
Եւ ցոյց կու տան անոր գործքերն .
Օրն ալ աւուր խօսք կը յայտնէ ,
Գիշերն՝ հանճար միւսին պատմէ :

2 Եղու շունին և շնն խօսիր,
 Ու ձայներնին բնաւ շնն խօսիր.
 Բայց խօսքերնին ան տեղ կ'երթայ,
 Ուր որ արևն իր լոյսը տայ:

3 Տէրոջն օրէնքն է երկնային,
 Կը նորոգէ մարդոց հոգին.
 Ս կայութիւնն է ճշմարիտ,
 Կ'ընէ ազէտն զգօնամիտ:

4 Իր կանոններն շիտակ սիրուն,
 Սրտից կու տան ուրախութիւն.
 Պատուիրանքներն են շատ պայծառ,
 Ընաց կու տան լոյս մշտաժառ:

5 Ընոնք ընտիր են ոսկիէն,
 Ըխորթելի անուշ մեղրէն.
 Թէ որ ծառադ անոնք պահէ,
 Ս'նծ հատուցում պիտի առնէ:

20 Ըստ... (10):

1 Երբ քեզ հանդիպի օրեր նեղութեան,
 Քեզ պատասխանէ հզօր Եհովան.
 Ընուն Ըստուծոյ թող քեզ պաշտպանէ,
 Եւ իր Սուրբ Հոգին քեզ միշտ սիւսիէ:

- 2 Խրկէ օգնութիւն քեզի երկինքէն ,
Քեզ զօրացընէ վերին Միօնէն .
Սրտիդ ընծաներն միշտ յիշատակէ ,
Բարի խորհուրդներդ գործքով կատարէ :
- 3 Տէր փրկութիւնդ պիտի խնդանք մենք ,
Քու Սուրբ Խօսքերովդ մենք միշտ կը
յաղթենք .
Տէրօջն անունով կանգնենք դժբախտ ,
Օյ կեանք յաւիտեան անով կ'ստանանք :
- 4 Ոմանք զէնքերուն են ապաւինած ,
Ոմանք ձիերուն և հարստութեանց .
Բայց մենք մի միայն Տէրօջն անուն
Յիշենք պիտի միշտ , կանչենք օգնութիւն :

21 Յաղթուելան համար շնորհակալու ելան . (8) :

- 1 Տէր իմ Աստուած Տէր փրկութեան ,
Քեզ հաւատացող ազգ մարդկութեան ,
Ս'եծ զօրութեամբ քու Սուրբ Խօսքիդ ,
Փրկութիւննին պիտի գանան :
- 2 Օյ օրնութիւնդ շնորհածիր ,
Անոնց վերայ հաստատեցիր .

Ընոնք քուկին դէմքիդ առջին ,
 Աւրախու թեամբ ուրախ ըրիր :

3 Թշնամիներդ պիտի պատժես ,
 Ըտեղիներդ պիտի մերժես .
 Եւ բարկութիւնդ երբ բորբոքի ,
 Ընոնք պիտի կորսնցընես :

4 Տէր՝ բարձր եղիր զօրութիւնով ,
 Մենք քեզ կ'օրհնենք սաղմոսներով .
 Վ.ու զօրութիւնդ պիտի երգենք ,
 Աւ քեզ պաշտենք բոլոր սրտով :

22 Դեղն-Բեռնի հըլ ողբեր . (8) :

1 Ո՛վ Տէր Ըտուած Տէր ողորմած ,
 Ինչո՞ւ համար իս ես ձգած .
 Յորեկ գիշեր քեզ կը կանչեմ ,
 Տուր պատասխան աղաչանացս :

2 Երբ հայրերնիս քեզ յուսացան ,
 Միշտ յուսալով հանգիստ գտան .
 Ըղատեցան քեզ կանչելով ,
 Քեզ հաւատացին ու չամբըցան :

- 3 Ո՛վ Տէր ինծմէ չը հեռանաս ,
 Օ՛ր նեղութիւնն է մօտեցած .
 Ինծի բընաւ օգնող չը կայ ,
 Թշնամիներս հասան վերաս :
- 4 Մի՛ հեռանար ո՛վ Տէր ինծմէ ,
 Քաւ գորութեամբդ ինծի օգնէ .
 Իմ անձս սուրէն իմ կեանքս շունէն ,
 Ըսիւծներուն բերնէն փրկէ :
- 5 Ո՛վ Տէրն սիրող բարեպաշտներ ,
 Տէրն օրհնեցէք ցորեկ գիշեր .
 Մեր նեղութիւնն անտես չըրաւ ,
 Աչ ալ երես դարձուց Տէրն մեր :

23 Տէրը մը Հովիւ . (10) :

- 1 Ինձ Տէրը եղաւ Հովիւ կառավար ,
 Եւ բանի մը ես կարօտ չեմ ըլլար .
 Օրեր անվախձան դաշտերն խոտաւէտ ,
 Պիտի ճարակիմ ընտրեալ հօտիդ հետ :
- 2 Հանդարտ ջուրերուն իս կ'առաջնորդէ ,
 Ծարաւը հոգւոյս կը յագեցընէ .
 Հոգիս իր խօսքովն միշտ կը նորոգէ ,
 Աւղիդ ճամբուն մէջ հաստատ կը պահէ :

3 Մ'ահուան շուքին ալ ձորին մէջ քայեմ ,
 Չարէն չեմ վախճար ու վախճալու չեմ •
 Քանզի ո՛վ Տէր՝ դուն ինձի միշտ հետ ես ,
 Եւ գաւազանովդ կը մտիթարես :

4 Քու ողորմու թիւնդ իմ հետքս կու գայ ,
 Բոլոր կեանքիս մէջ ինձի սիրտ կու տայ •
 Երկար ժամանակ պիտի բընակիմ ,
 Տէրոջը տաճարն ու հոն ես հանգչիմ :

24 Աստուծոյ Բազմաբնութիւնը . (8) :

1 Տէրոջ լեռն ո՛վ պիտի ելայ ,
 Սուրբ տեղը ո՛վ պիտի կենայ •
 Չեաքով՝ սրտով մաքուր եղողն ,
 Սուտ չը ճանչցող երգում չընողն :

2 Ըն կ'ստանայ իր Տէրոջմէն ,
 Սուրբ օրհնութիւն ամէն ատեն •
 Եւ Աստուծմէն իր փրկութեան ,
 Չբրի չընորհք արդարութեան :

3 Վեր համբարձէք ո՛վ սուրբ դուռներ ,
 Որ ներս մտնէ փառաց մեծ Տէր •
 Ո՛վ է փառաց աս թագաւոր ,
 Օջրաց Տէրն է Աստուած հզօր :

25 Ողբերգութեան համար աղօթք . (8) :

- 1 Ո՛վ Տէր քեզի զիս կը յանձնեմ ,
Բոլոր յոյսերս քեզ կը դնեմ .
Տուր որ բընաւ ես չամչնամ ,
Թշնամիներս բոլոր յաղթեմ :
- 2 Ո՛վ Տէր ճամբադ ինձի ցուցուր ,
Ճշմարտութիւնդ ինձ սորվեցուր .
Քանզի դուն ես Տէր փրկութեան ,
Քեզ կ'սպասեմ զիս մի՛ թողուր :
- 3 Գթութիւններդ յիշէ ո՛վ Տէր ,
Օ՛ր յաւիտեան ես բարեւեր .
Ողորմութեամբդ այց ընելով ,
Ի՛մ հին մեղքերս ալ մի՛ յիշեր :
- 4 Տէրն հեղերուն կ'առաջնորդէ ,
Եւ իբ ճամբան կը ցուցընէ .
Իրեն պատուէրն պահողներուն ,
Ճշմարտութիւնը կը յայանէ :
- 5 Ո՛վ Տէր քուկին անուանդ համար ,
Ներէ իմն մեղքս անհամար .
Ինձ Սուրբ Խօսքերդ կանոն ըրի ,
Շայանէ ինձի քու կամքդ արդար :

26 Ընկառանդութիւն . (8 + 6) :

1 Ո՛վ Տէր դատող սրտի քննող ,
Իմ սիրտըս դուն փորձէ .

Ճշմարտութեանդ եմ հետևող ,
Ինձի միշտ ողորմէ :

2 Ունայն մարդոց հետ չը նստայ ,
Կեղծ մարդը ատեցի .

Չար ժողովքէն ետ կայնեցայ ,
Ընկրօնն ալ մերժեցի :

3 Ո՛վ Տէր քու տունդ ես սիրեցի ,
Տաճարը քու փառքիդ .

Ճշմարտութիւնդ ես ընտրեցի ,
Կեցայ ես միշտ առջիդ :

4 Ե խառն ճամբու մէջ կը կենամ ,
Իմ ոտքս չը սասանի .

Ժողովքներու մէջ յարածամ ,
Տէրն ես գովեմ պիտի :

27 Տէրը եւ պաշտպանէ եւ ծառաները . (8) :

1 Տէրն է ինձի լոյս , փրկութիւն ,

Ըրդեօք ուսկից պիտի վախճամ .

Տէրն է կեանքիս պաշտպանութիւն ,
 Ըրդեօք ուսկից պիտի դողամ :

2 Չարերն եկան որ զիս ուտեն ,
 Իրենք վախցան կործանեցան .
 Ես չեմ վախնար շատ զօրքերէն ,
 Թէ և կռուին Տէրս է պաշտպան :

3 Ես կը խնդրեմ Տէր Աստուծմէն ,
 Որ իր տան մէջ միշտ բընակիմ .
 Այնելութիւնն աչքերս տեսնեն ,
 Գինքն ալ խնդրեմ ու փրկուիմ :

4 Տէր քու երեսդ պիտի փնտռեմ ,
 Քանզի այնպէս պատուիրեցիր .
 Տէր մի՛ ծածկեր երեսդ վսեմ ,
 Միշտ ինձ օգնէ պաշտպան եղիր :

5 Թէ որ իմ հայրս՝ մայրս երկրածին ,
 Իս երեսէ ձգեն մերժեն .
 Հայնժամ իմ Հայրըս երկնային ,
 Ինձի կ'ըլլայ միշտ ապաւեն :

6 Կը հաւատամ որ Տէրս տեսնեմ ,
 Ի մէջ փառաց արքայութեան .
 Ես իմ Տէրողս միշտ կ'սպասեմ ,
 Ընոր յուսովն եմ անսասան :

28 Երեւոյն Տեղ ազօրէս • (10) :

- 1 Ո՛վ Տէր Եհովա քեզի կը կանչեմ ,
Ինծի մի՛ լռուեր ո՛վ դուն հոգւոյս վէմ •
Թե՛ որ չը լսես իմ աղաչանքիս ,
Շուտով ամէն յոյս կը կորսնցընեմ :
- 2 Օրհնեալ բլայ Տէրն որ ձայնըս լսեց ,
Ըն իս զօրացուց և իս պաշտպանեց •
Ընոր յուսալով սիրտս ուրախացաւ ,
Ընոր օրհուծիւն բերանըս երգեց :
- 3 Ո՛վ Տէր իմ դուն ես պարիսպ փրկութեան ,
Փրկէ ժողովուրդդ որ քեզ կը յուսան •
Հովուէ դուն զանոնք և միշտ բարձ-
րացուր ,
Որ քու սր անուանդ պատիւ և փառք տան :

29 Երեւոյն Տեղ ազօրէս • (10) :

- 1 Տերօջը տուէք ո՛վ ազգք մարդկային ,
Տերօջը տուէք փառք և զօրութիւն •
Տերօջը տուէք փառքն իր անունին ,
Ըրէք Երեւոյն երկիրպագութիւն :

2 Մեր Տէր Աստուծոյն ձայնն է զօրաւոր ,
 Եւ շատ վեհափառ են իր պատգամներն .
 Անոնք կը սարսեն աշխարհքըս բոլոր ,
 Կը կորսնցընեն իր թշնամիներն :

3 Տէրն է յաւիտեան աթոռը նստող ,
 Եւ ուժ պիտի տայ իր ժողովուրդին .
 Տէրն խաղաղութիւն տուող է օրհնող ,
 Իրեն հաւատացող ընտրեալ սուրբ ազգին :

30 Փրկիչն է հմար իսրայէլեան .
 (8) :

1 Ո՛վ Տէր Աստուած քեզ կը գովեմ ,
 Օ՛ի սոսիսէս զիս փրկեցիր .
 Ո՛վ Տէր Փրկիչ՝ քեզ կը կանչեմ ,
 Օ՛ի դուն զիս շուտ բժշկեցիր :

2 Սաղմոսներով ո՛վ ընտրեալներ ,
 Եւ ընորհակալ եղիք անոր .
 Օ՛ի ան տուաւ մեզ կեանք շնորհքներ ,
 Անսուտ խոստմունք աւետաւոր :

3 Ո՛վ Տէր Աստուած ինձ ողորմէ՛ ,
 Եւ միշտ ինձի պաշտպան եղիր .
 Դուն հանեցիր իմ քուրձս ինձմէ ,
 Աւրախութիւն ինձ հագցուցիր :

31 Երգիչի յուսուցիչ Էնր • (8) :

28

- 1 Ա՛լ Տէր քեզի ես կը յուսամ ,
 Որ յաւիտեան բնաւ չամբշնամ •
 Երգարութեամբդ իս ազատէ ,
 Որ փրկութեանդ ժառանգ ըլլամ :
- 2 Ա՛լ Տէր քեզի զիս կը յանձնեմ ,
 Հոգիս և սիրտս քեզ կը ձօնեմ •
 Օ՛ր ճշմարիտ Եստուած դուն ես ,
 Վեղմով բանտէն ազատեր եմ :
- 3 Ա՛լ Տէր ինձի դուն ողորմէ՛ ,
 Իս ազատէ նեղութենէ •
 Չարաց ժողովն իս ատելով •
 Կ'ուզէ որ իս կորսնցընէ :
- 4 Բայց ես քեզի միշտ յուսացայ ,
 Օ՛ր ես Եստուած յաւե՛տակայ •
 Կեանքս ու վիճակս ձեռքիդ մէջն է ,
 Ողորմութիւնդ իմ վրաս ըլլայ :
- 5 Հաւատացողներն Տէրն կը պահէ ,
 Ենձնապարծներն խիստ կը պատժէ •
 Ա՛լ որ Տէրօջ կը յուսայ ,
 Ի՛ր սիրալ Տէրն կ'ուժովցընէ :

28

31

32 ՄԷՂԷ Խոստովանութիւն . (8 . 6) :

- 1 Միւր երանի է ան մարդուն ,
Որ իր յանցանքներուն .
Տուաւ Տէրոջը գթութիւն ,
Ներում և թողութիւն :
- 2 Տէր իմ յանցանքս քեզ յայտնեցի ,
Մեղքերս չը ծածկեցի .
Ըսի՛ Տէրոջս խոստովանիմ ,
Սրտանց՛ Տէր կը ցաւիմ :
- 3 Տէր դուն ես ինձ պատրաստան ,
Չարեաց դէմ պահապան .
Դուն իս փրկէ նեղութենէ ,
Ըզատութիւն շնորհէ :
- 4 Եւ առ են տանջանք մեղաւորին .
Տէրոջը ծառային
Միշտ կը հասնի երջանկութիւն ,
Երկնից ուրախութիւն :

33 Ըստ Թոմայ Վրաց Խոստովանութիւն . (10) :

- 1 Ո՛վ դուք արդարներ ՚ի Տէր խնդացէք ,
Ընոր անունին պատիւ փառք տուէք .

Օյ ուղիղներուն օրհնել կը վայրէ .
Սաղմոս երգելով զՏէրն գովեցէք :

2 Տէրոջ Խօսքերն են ուղիղ՝ գերասլանծ ,
Ճշմարտութիւնով գործքերն հաստատուած .
Կա արդարութիւն խիստ շատ կը սիրէ ,
Ողորմութիւնովն երկիրս է լեցուած :

3 Ըմէն երկիր թող վախնան Տէրոջմէ .
Եւ բընակիչներն դողան միշտ անկէ .
Ինչու որ՝ անոր Խօսքն է շատ զօրեղ ,
Որով մարդոց փաճ խորհուրդ կը ցրուէ :

4 Հազար երանի որուն Տէր Ըստուած ,
Եղած է և է մի միայն Ըստուած .
Կակ ան ազգին որ Տէրն կը սիրէ ,
Եւ ժառանգութիւն իրեն է ընտրած :

5 Ըհա Տէրոջն աչք միշտ կը խնամէ .
Ընոնք որ անդուլ վախցող են իրմէ .
Որոնք կը յուսան անկեղծութիւնով
Տէրոջ գթութեան , որ մեզ կը փրկէ :

34 Փատաբանութիւն Լսարանոյ Բարան- Բեանը . (8) :

- 1 Տէրն անգաղար պիտի գովեմ ,
Լսէն ատեն բերնովս օրհնեմ .
Հոգիս Տէրամբ թող պարծենայ ,
Թող հեզն լսէ և միշտ ցնծայ :
- 2 Լղբաան կանչեց ու Տէրն լսեց ,
Իր ցաւերէն ալ ազատեց .
Ընարեալներուն միշտ կը խրկէ
Իրեն հրեշտակն , որ պահպանէ :
- 3 Ա փեցիր ո՞վ ճարդ դուն Տէրօջմէ ,
Օյի վախցողին բան պակասած չէ
Ս'եծ ճարդիկներ աղքատացան ,
Լստուած փնտռողք հարուստ եղան :
- 4 Երբոր արգարն Տէրօջն կանչէ ,
Տէրն լսելով ան կը փրկէ .
Տէրն է մօտիկ կտորած սրտին ,
Լպրեցուցիչ զղջացողին :
- 5 Լրդարն ատողն կը պատժուի ,
Իր չարութեամբ կը կորսուի .
Տէրն իր ծառան միշտ կը փրկէ ,
Տուսացողներն կ'ապրեցընէ :

35 'Եկե՛ք ինձ հետ և ուսուցի՛ր ձեզ : (8) :

- 1 Ո՛վ Տէր ինձի դէմ կայնողին ,
Դուն էլ դէմ դիր և ինձ օգնէ . }
'Եկե՛ք քաջէ՛ հալածողին ,
Մեծիդ փրկիչ՝ ես եմ ըսէ :
- 2 Վեզմով հոգիս պիտի ցնծայ ,
Փրկու թիւնովդ պիտի խնդամ .
Երբոր սուրբ աջդ իմ վրաս կ'ըլլայ ,
Թշնամիներս յաղթող կ'ըլլամ :
- 3 Ի՛մ սպարներս պիտի ըսեն ,
Ո՛վ է նման Տէր իմ քեզի .
Որ կ'ազատես բնաւորէն ,
Մաքան որ միշտ կը զրկուի :
- 4 Թշնամիներս շուրախանան ,
Իս առողներն թո՛ղ միշտ խպնին .
Օ՛խ կը հաւնին միշտ նենգութեան ,
Խաղաղութեան դէմ կը կայնին :
- 5 Ո՛վ Տէր Մտաւած իրաւունքիս ,
Մեք և ել 'ի դատաստան .
Մեր դարութեամբ օգնէ անձիս ,
Որ իմ վրաս շուրախանան :

6 Երգարութիւնդ ուզողներուն ,
 Դուն ցնծութիւն միշտ պարգևէ .
 Խաղաղութիւնդ խնդրողներուն ,
 Սուրբ օրհնութիւն ու կեանք շնորհէ :

36 Չարէրուն Բշտաւ Վճռիւր . (8) :

1 Իմին սրտիս ըսել կու տայ ,
 Չար նենգութիւն մեղաւորին .
 Թէ Եստուծոյ երկիւղն չկայ ,
 Ենոր հոգւոյն աշաց առջին :

2 Իբ մահիճին մէջ կը փնտռէ ,
 Չուսն անիրաւ նոր ճամբաներ .
 Մ'ոյի գործքեր կը հընարէ ,
 Եւ զինք շարէն ետ չքաշեր :

3 Ո՛վ Տէր Եստուած ճշմարտութեան՝
 Ողորմութիւնդ է գերազանց ,
 Երգարութիւնդ լեռան նման ,
 Օ՛խ գունն եղար Փրկիչ մարդկանց :

4 Տէր՝ գթութիւնդ է անսահման ,
 Քու քովդ կայ ազրիւր կեանքի .

Վու թևերուդ պաշտպանութեան
Հաւատացեալն կ'ապաւինի :

[37 Բարեբեռն շաբաթի Բարեբեռն . (8 . 6) :

1 Մի նախանձիր չարաց համար ,
Բընաւ մի' նեղանար .

Խոտի պէս շուտ պիտի կարին ,
Չորնան թափին ալ վար :

2 Տերոջն յուսա՛ բարիք ըրէ ,
Ճշմարտութիւն սիրէ .

Միշտ Տերոջմով ուրախացիր ,
Խնդիրդ կը կատարէ :

3 Չարիք գործողն կը փրձանայ ,
Ըրգարը կը մեծնայ .

Եւ ամբարիշտը չես գտներ ,
Չի չիք պիտի ըլլայ :

4 Սրբոց քայլերն կը հաստատես ,
Ընոնց ճամբուն գոհ ես .

Թէ որ իյնան շեն կործանիր ,
Չեաքովդ կ'առաջնորդես :

5 Թէ որ չար մարդն զօրեղ տեսնես ,
Բարձր ծառի մը պէս .

Գիտցիր՝ կ'անցնի անյայտ կ'ըլայ ,
 Զկայ երբ փնտրես :

6 Ընձեղ մարդիկ դուն նկատէ ,
 Ու շիտակին նայէ .
 Վանզի անոնց վերջն է խաղաղ ,
 Ըշատ նեղութենէ :

38 ՍԷՂԻ ԽՈՍԿՈՒՄՆՈՒԼԻՆ . (8) :

1 Նեղանալով Տէր մի՛ շխտեր ,
 Սրգողելով իս մի՛ խրատեր .
 Ըսողջութիւնս կորսընցուցի ,
 Սեղք գործելով ընդդէմ քեզի :

2 Հիւանդութիւնս իս տրամեցուց ,
 Սիրտս ալ սաստիկ ցաւով լեցուց .
 Ըմէն բաղձանքս առջիդ է բաց ,
 Վեղմէ վիշտերս շնն ծածկուած :

3 Ո՛վ Տէր քեզի ես յուսացայ ,
 Վու որդեգիրդ ես կոչուեցայ .
 Տուր պատասխան Տէր կամարար ,
 Վուկին օրհնեալ անուանդ համար :

- 4 Իս մի՛ թողուր Տէր բարերար ,
 Ինձմէ քրնաւ մի՛ հեռանար .
 Հուսով հասցնուր ինձ օգնութիւն ,
 Օխ դուն ես ինձ կեանք փրկութիւն :

39 Ո՛ւր է Լեւոնի ռանայն լիւնը . (8) :

- 1 Ըօի թէ ես ճամբաս պահեմ ,
 Որ իմ լեզուովս մեղք չգործեմ .
 Երբ մեղաւորն առջիս կայնի ,
 Բերանս սանձով աղէկ զսպեմ :
- 2 Ո՛վ Տէր իմ վերջս ինձի յայտնէ ,
 Եւ օրերուս շափն ինձ համրէ .
 Որ ես գիտնամ թէ կեանքս ամէն ,
 Ինչ անցաւոր ունայն բան է :
- 3 Թփղի մը չափ օրերս ըրիր ,
 Կեանքս ոչնչի պէս ցոյց տուիր .
 Ի՞նչպէս մարդիկ են հաստատուած ,
 Սակայն փուճ են ամէն իժիր :
- 4 Արդ ինչ բանի ես կը սպասեմ ,
 Քու վրաց միայն յոյս կը դնեմ .
 Յանցանքներէս դուն իս փրկէ ,
 Չարաց ծաղրելն վրաս չտեսնեմ :

- 5 Ով Տէր լսէ իմ աղօթքիս ,
 Եկանջըդ դիր աղաղակիս ,
 Պանդուխտ եմ ես իմ հարցըս պէս ,
 Հանգստութիւն տուր իմ անձիս ։

40 Լսութեան յուսացողն լսելու . (8) ։

- 1 Եկողութեանց մէջ համբերեցի ,
 Տէրն ծուեցաւ լսեց ինձի .
 Խօ կորստեան փոսէն հանեց ,
 Ատքս ալ վէժի վրայ հաստատեց ։
- 2 Եւ իմ բերանս նոր երգ գրբաւ ,
 Հոգիս Տէրոջ մեծ փառք տուաւ .
 Թող շատ մարդիկ առ իմանան ,
 Աւ վախնալով Տէրոջ յուսան ։
- 3 Կու տամ անոր ես երանի ,
 Ար հպարտաց բնաւ շնայի .
 Կ'ատէ դարձողն շար ստութեան ,
 Աւ Տէրն կ'ընէ իր ապաստան ։
- 4 Քուկին հրաշքներդ շատ են ձգ Տէր ,
 Քու խորհուրդներդ խելքէ են վեր .
 Ես չեմ կրնար անոնք պատմել ,
 Օյ համբանքէ են շատ եւել ։

5 Տէր փրկութիւնդ քարոզեցի,
 Ղ'շմարտութիւնդ շժանկեցի:
 Տէր՝ գթութեամբդ ինծի օգնէ,
 Ղ'շմարտութեան մէջ զիս պահէ:

41 Ընդունալով ինչ որ ասուի . (8 . 6) :

1 Ըսի՛ սով Տէր ինձ ողորմէ՛ ,
 Իմ անձքս բժշկէ .
 Ինչու որ ես մեղանշեցի ,
 Վեցի գէ՛մ գործեցի :

2 Թշնամիներս կը բամբասեն ,
 Ինծի համար կ'ըսեն .
 Երբ անիկայ պիտի մեռնի ,
 Ընունն ալ կորսուի :

3 Իս ատողներն կը փսփսան ,
 Գէշ բան կը յայտնան .
 Կ'ըսեն թէ ան կը կործանի ,
 Ընչուչս պիտի մեռնի :

4 Ըայց դուն սով Տէր փրկիչ հօր .
 Իրթն , զիս կանգնեցուր .
 Թշնամիս բերանն գոցէ ,
 Ինծի դուն միշտ օգնէ :

5 Յայնժամ աղէկ կը հասկընամ ,
 Որ ինձ ես բարեխնամ .
 Երբ թշնամուոյս բերանը չար ,
 Ա ըրաս չպարծենար :

6 Լնմեղութեան մէջ իս պահէ ,
 Շնորհքիդ մէջ հաստատէ .
 Որ միշտ օրինեմ քեզ յաւիտեան ,
 Օխ փառք քեզ է արժան :

42 Լ՝՝՝՝՝՝՝՝՝ (8) :

1 Արընթաց եղջերուն նման՝
 Որ ջուրերուն փտակներուն
 Կը փափաքի 'ի ծարուսեան .
 Ես ալ անձամբ յոյժ կաթողին՝
 Քեզ կը խնդրեմ Տէր փրկութեան ,
 Լօ՛ք սրտիս հառաչանքին :

2 Ես քու տեսոյդ եմ խանդակաթ ,
 Երբ գամ պիտի ու երևնամ
 Տէրօջս առջևը գըթառատ .
 Երբօր կ'ըսեն ո՛ր է Լստուածդ
 Գիշեր ցօրեկ ինձ անընդհատ ,
 Դունն արտասուք է միայն հաց :

- 3 Ո՛հ կը ցանկամ ան օրերուն՝
 Որ սուրբ տաճարըդ կ'երթայի
 Ուրախութեամբ յոյժ պատարուն .
 Եւ օրհնութիւն սաղմոսելով՝
 Պահապանիդ յաւէժ անքուն ,
 Կը ցանկայի միշտ հոգիով :
- 4 Իայց դուն անձն իմ ի՛նչ կը տրամիս՝
 Հաս հոգերու մէջ ընկղմած .
 Ի՛նչ շարունակ կը մաշես իս ,
 Յուսն՝ ի Տէր և սն խրախոյս .
 Գեռ ժամանակ քու ձեռքդ ունիս ,
 Ս'ի խըռովիւր իբրև անյոս :
- 5 Օրհնէ Լստուած բոլոր սրտով ,
 Որ քեզ կարող է բժշկել ,
 Իր քաղցր աչքին հայեցուածքով :
 Տէր՝ ի խորոց սրտիս կը զգամ
 Սաստիկ փափաք մեծ եռանդով ,
 Որ տեսութեամբդ ուրախանամ :

43 Նիւղո-Ընտնց Տեղ աղօթք . (8) :

- 1 Ո՛վ Տէր Լստուած դուն իս դատէ ,
 Եւ իրաւունքս արդարացուր .

Նենգաւորէն իս ազատէ ,
Եւ պիղծ աչքէն ալ հեռացնուի :

2 Տէր ապաւէն ինձի դուն ես ,
Ինչո՞ւ համար մոռցար Տէր զիս .
Ինչո՞ւ արտու՞մ քալեմ աշտպէս ,
Երբոր նեղէ զիս թշնամիս :

3 Ճշմարտութիւնդ և լոյսդ խրկէ ,
Ընծիք ինձի առաջնորդեն .
Սուրբ լեռըդ Տէր դուն զիս հանէ ,
Եւ թող քու փառքդ աչքերս տեսնեն :

4 Ինչո՞ւ արտու՞մ ես ո՞վ հոգիս ,
Ինչո՞ւ համար իս կը տանջես .
Տէրօջն յուս՞ա փառք տուր Փրկչիս ,
Օ՞ր փրկութիւնս է իմ Փրկչէս :

44 Լուսո՞ւմայ օգնու՞մք Լեւոնը համար ազօն .
(10) :

1 Ո՞վ Տէր լսեցինք մենք ազանջովիս ,
Գործքերդ պատմեցին մեզի հայրերնիս .
Որ հին ատեններն կամօք գործեցիր ,
Ընծեց աչքերուն առջին ցոյց տուիր :

- 2 'Իսուն հեթանոսներն ձեռքովդ քրչեցիր ,
 Ընոնց տեղերնին քու ազգդ տնկեցիր .
 Չէ թէ սուրերով ան ժառանգեցին ,
 Հապա զօրաւոր թևովդ յաղթեցին :
- 3 Ո՛վ Տէր դուն ինքդ ես ինձի թագաւոր .
 Իմին փրկութեանս շուտով հրաման տուք .
 Վեզմով թշնամին պիտի մենք յաղթենք
 Եւ քու անունովդ ոտքի տակ առնենք :
- 4 Վանգի ազեղիս բընաւ շիմ յուսար ,
 Եւ իս ազատել իմ սուրս չկրնար .
 Թշնամիներէն դուն մեզ կը փրկես ,
 Ու մեզ ատողներն ուժովդ կը ցրուես :
- 5 Բայց Տէր ամէն օր մենք կը աանջուինք ,
 Եւ մօրթուելու ոչխար կը սեպուինք .
 Ո՛վ Տէր արթնցիր ինչու քնանաս ,
 Երեսդ կը ծածկես ու մեզ կը մտռնաս :
- 6 Վանգի անձերնիս հողին ծոցեալ ,
 Ս'եր փորն ալ մինչև գետինը փակաւ .
 Վաւ ողորմութեամբդ կլիր մեզ օգնէ ,
 Եւ սուրբ անունիդ համար մեզ փրկէ :

45 Քրիստոսի յաւիտեանիս լուսաւորու- թիւնը • (10) :

- 1 Բարի խօսքերով իմ սիրտըս կ'եփի ,
Պիտի արդ գովէ զանուն արքայի •
Լեզուս շուտ գրբող գրչի է նման ,
Եւ միշտ քարոզող սուրբ ճշմարտութեան :
- 2 Վեզի պէս ազուոր չկայ մարդ բընաւ ,
Շքթունքիդ վերայ շընորհք թափեցաւ •
Ընոր համար քեզ Տէրօղըն բերան ,
Օրհնեց բարձրացուց մինչև յաւիտեան :
- 3 Ո՛վ դուն Տէր հզօր սուրդ մէջբըդ կապէ ,
Ու քու մեծ փառքովդ մեր մէջը փայլէ •
Վուկին զօրաւոր խօսքովդ սրբազան ,
Լմեն ժողովուրդ քու տակըդ կ'իյնան :
- 4 Ըստուած՝ քու աթողդ է մինչ յաւիտեան ,
Վուկին Տէրութիւնդ է միշտ անսահման •
Վու սուրբ գաւազանդ մարդոց է ուղղիչ ,
Լըդար գաւազան մարդկան ազատիչ :
- 5 Դուն արդարութիւնն խիստ շատ կը սիրես ,
Լմեն շար գործքերն կ'ատես կը հերքես •

Ընոր համար քեզ ով Տէր Ըստուած մեր,
Ըստուածըդ օծեց ամէն մարդէ վեր:

- 6 Քուկին սուրբ անունդ ամէն ազգաց մէջ,
Պիտի հաշակուի միշտ և մինչև վերջ.
Եւ աս պատճառաւ ազգերըն ամէն,
Մինչև յախտեան պիտի քեզ գովեն:

46 Ըստուած է Տէր Փրկիչ . (8) :

- 1 Ըստուած է մեզ յոյս զօրութիւն,
Մեծ նեղութեան մէջ օգնութիւն.
Ընոր համար մենք չվախեանք,
Որչափ և մեծ փորձանք տեսնանք:

- 2 Սուրբ Գիրքն իբն վտակներով,
Ուրախ կ'ընէ և ապահով
Տէր Ըստուծոյ եկեղեցին,
Իընակարանն բարձրեալ Փրկչին:

- 3 Ըստուած անոր մէջ կը նստի,
Եւ միշտ անոր օգնէ պիտի.
Կուռք պաշտօղներն թող շփոթին,
Բանաւորներն թող սարսափին:

4 Օտրաց Տէրն է՝ Տէր փրկութեան ,
 Ս'եզի հետ է և օգնական .
 Ս'եզ լոյս կու տայ իր սուրբ հոգւով ,
 Եւ կը փրկէ իր մեծ շնորհքով :

47 Յորտորուն՝ Լսութեան հնազանդելու .
 (8 . 6) :

1 Ո՛վ դուք ամէն ժողովուրդներ ,
 Տէրոջ միշտ ծափ զարկէք .
 Ու ցնծութեան ձայնով երգեր ,
 Ընոր դուք երգեցէք :

2 Քանզի Տէր մեր է մեծ Լստուած ,
 Լքբայ է ամենուն .
 Խորձրեալ փրկիչ քաւիչ մեզաց ,
 Օգջում ընողներուն :

3 Ժողովուրդներ աղգեր մեզի
 Լստուած Հնազանդեցուց .
 Փառքն Յակորին շատ սիրելի ,
 Ս'եզի ժառանգեցուց :

4 Սաղմոս ըսէք դուք ձայնաւոր ,
 Ս'եր մեծ Թագաւորին .
 Քանզի նա ինքն է Թագաւոր ,
 Եւ Տէր ամէն երկրին :

48 Երևույնն Երոստղէին ժամուր . (10) :

1 Տէրն է խիստ շատ մեծ՝ ինքն է միշտ
օրհնած ,

Եւ մեր Աստուծոյ քաղցին մեզ նստած •
Յնծում աշխարհիս է լեռն Միօնին ,
Անկէ կու տայ Տէր շնորհք՝ խնդրողին :

2 Ինտոր լսեցինք անանկ ալ տեսանք ,
Բոլոր աշխարհի Միօնն է պարծանք •
Քանզի հոն նստած է մեր մեծ արքան ,
Հիմնեց զանիկայ Աստուած յախտեան :

3 Քու ողորմութիւնդ մեզի շնորհեցիր ,
Քու սուրբ տաճարէդ դուն մեզ փրկեցիր •
Ամեն տեղ անուանդ արուի գովութիւն ,
Արդարութիւնով աջ ձեռքդ է լեցուն :

4 Մեր սուրբ լեռն Միօն ուրախ թող ըլլայ ,
Օյ մարդ փրկութիւն շնորհք կը ստանայ •
Օյ Տէրն շնորհեց մեզ արդարութիւն ,
Ու մեղաւորին մեղաց քաւութիւն :

5 Ան է մեր Աստուածն միշտ և յախտեան ,
Հովիւ առաջնորդ մինչև ՚ի վախճան •

Ընտփ կը ստանանք մենք մեր փրկութիւն ,
 Որ ինք խոստացաւ իր ծառաներուն :

49 Չարէրուն ահաւոր ձեճակը . (8) :

- 1 Մտիկ ըրէք ամէն ազգեր ,
 Եւ աշխարհիս բընակիչներ .
 Ըտոր հարուստ՝ աղքատ մարդիկ ,
 Ըզնուական նաև ուսմիկ :
- 2 Իրենց ուժին յուսացողներն ,
 Հարըստութեամբ պարծենցողներն .
 Մարդ չէ կարող եղբայրն փրկել ,
 Եւ կամ փրկանք հասուցանել :
- 3 Ընտնք այսպէս խորհուրդ ունին ,
 Թէ յաւիտեան պիտի ապրին .
 Իրենց տուններն պիտի մնան ,
 Ընուններնին քաղքի կու տան :
- 4 Բայց մարդ պատուոյ մէջ չմնար ,
 Խեղճ անամնոց կ'ըլտայ հաւսար .
 Երբոր ջընարեր Տէրոջ ճամբան ,
 Ընոր Սուրբ Խօսքն և պատուիրանն :

5⁷ Թե և շար մարդն կը հարուստնայ,
Եւ իբ տունին փառքն ալ շատնայ,
Դուն մի՛ վախնար՝ զի երբ մեռնի,
Իբ հետ ոչինչ պիտի տանի :

6 Սակայն Մատուած պիտի փրկէ,
Իմին հոգիս շար մահուանէ .
Քանզի Տէր իմ իս ընդունեց,
Կրան փրկութեան ինձի շնորհեց :

50 Չարերուն երգ . (8) :

1 Մատուածներուն Մատուածն և Տէր,
Ինք խօսեցաւ քոյր երկրէն .
Եւ Սիօնէն Տէր մարդասէր,
Կանչեց ամէն ազգ մարդկային :

2 Ո՛վ ժողովուրդս մօիկ ըրէ,
Քանզի քեզի պիտի խօսիմ .
Ո՛վ Իսրայէլ քու միտքդ պահէ,
Որ ես քակին Փրկիչդ կ'ըսուիմ :

3 Ես քու տունէդ չեմ ընդունիր,
Ո՛չ զուարակ ոչ նոխազներ .
Իմօ է աշխարհ քոյր երկիր,
Ընթեմնամ քեզ չեմ ըսեր :

- 4 Օւարակաց միս չեմ ուտեր ,
 Ինձ նոխազաց արիւն պէտք չէ .
 Օճն օրնութեան կ'ուզէ միշտ Տէր ,
 Դուն Խարձրելոյն ուխտդ կատարէ :
- 5 Ս'եղաւորին Մատուած կ'ըսէ ,
 Ինչո՞ւ օրէնքս բերանդ կ'առնես .
 Վանզի իմ խրատս հաճոյ քեզ չէ ,
 Եւ իմ խօսքերս միշտ կը մերժես :
- 6 Հ ընացողաց կը հետևիս ,
 Եւ գողերուն ընկեր կ'ըլլաս .
 Եղբօրդ դէմ գէշ կը խօսիս ,
 Ըրածներդ դուն պիտի գտնաս :

51 Ս'եղաց Խոստումնո-ւնն . (10) :

- 1 Մատուած ողորմած՝ ինծի ողորմէ՛ ,
 Ընչուն գթութեամբդ իմ մեղքս քաւէ .
 Ըմէն յանցանքէս լուս իս մաքրէ ,
 Խփն մեղքերէս ո՞վ Տէր իս սրբէ :
- 2 Վանզի յանցանքներս յայտնի են ինծի ,
 Ս'եղքս ալ միշտ աչքիս առջին կը կայնի *
 Ս'ինակ քեզի դէմ ես մեղանչեցի ,
 Իւ մեծ չարութիւն առջևդ գործեցի :

- 3 Թէ որ իս պատժես՝ դուն կ'արդարանաս ,
 Ու դատաստանովդ ամբիժ կը մընաս .
 Վանդի յանցանքով մօրմէս յղացայ ,
 Ծնած ատենս ալ մեղքի մէջ ծնայ :
- 4 Մաքրէ մշտիկով՝ որ ես սրբանամ ,
 Չունեն աւելի ճերմակ ես ըլլամ .
 Ըմէն մեղքերէս դուն զիս ազատէ ,
 Մխիթարութեամբդ ուրախ զիս ըրէ :
- 5 Ո՛վ Տէր ներսի զիս սուրբ սիրտ սանդձէ ,
 Ինձի նորոգուած հոգի մը շնորհէ .
 Իս քու երեսէդ բընաւ մի՛ ձգեր ,
 Ու քու Սուրբ Հօգիդ ինձմէ մի՛ հաներ :
- 6 Վանդի ո՛վ Տէր՝ դուն զոհեր չես կամիր ,
 Եւ ողջակէզներ բընաւ չես հաւնիր .
 Տերօջ հաւնած զո՞ն՛ կտարած հոգին է ,
 Խոնարհ սրտին սէրն՝ անօր հաճոյ է :

52 Զարոյ իրո-սրբ . (8 . 6) :

- 1 Ինչո՞ւ պարծիս ո՛վ բունաւոր ,
 Ընօրէնութիւնով .
 Մեզ Տէրն պահէ ամէն մէկ օր ,
 Իրեն գթութիւնով :

2 Լեզուդ շար խօսք նարելով ,

Կընէ միշտ նենգութիւն .

Եւ շարութեան հետեւելով ,

Կ'ատես աղէկութիւն :

3 Ըստուած պիտի քեզ կործանէ ,

Հանէ քեզ աս տունէն .

Ըրմատախիլ պիտի ընէ ,

Եւ յոգովութիւն մեզէն :

4 Ըրդար մարդիկ՝ պիտի վախնան ,

Պիտի լեցուին վախով .

Քու կորըստեանդ վերայ խնդան ,

Ըսն ծիծաղելով . —

5 Ըհա աս մարդն է՝ որ չըրաւ

Ըստուած իր զօրութիւն :

Հարըստութեան վրայ յոյս դրաւ ,

Իր ոյժն էր նենգութիւն :

53 Մարդն չարութիւնը . (8) :

1 Իսննդն իր սրտին մեզէն ըսաւ ,

Ըստուած չկայ մեզի իշխող .

Ըմէն մարդ պիղծ ու շար եղաւ ,

Ըղէկութիւն չկայ ընող :

2 Տէրն երկինքէն վար նայեցաւ ,
 Տեսնայ թէ՛ կայ Մատուած խնդրող •
 Սարդ իմաստուն արգար և լաւ ,
 Նշմարութեան միշտ հետևող :

3 Մէն մարդիկ պղծուեցան ,
 Սէկ մարդ չկայ մեղք չգործող •
 Մէն մարդիկ են անպիտան ,
 Մրդարութիւն չկայ սիրող :

4 Մնոնք ան տեղ խիտ շատ վախցան ,
 Ուր որ բնաւ երկիրը չկար •
 Ու Մատուածէ անարգուեցան ,
 Սարդիկ որոնք սրտով են չար :

5 Հիմա թող գայ մեր Սիօնէն ,
 Փրկիչ Մատուածն Իսրայէլի •
 Որ Իսրայէլն գերութենէն ,
 Մշտանելով խնդայ հրձուի :

54 Թշնամեաց գէ՛ղ արօ՞րէ • (10) :

1 Ո՛վ Տէր՝ դուն ևս յոյս նեղեալ հոգիիս ,
 Քուկին անունովդ դուն իս աղատէ •
 Եւ քու զօրութիւնդ՝ Փրկիչ աշխարհիս ,
 Քուկին ծառայիդ հասիր ու փրկէ :

- 2 Ո՛վ Տէր իմ Աստուած՝ ձայնիս լսէ,
 Վանդի օտարներ զիս հալածեցին .
 Ու մարդ բռնաւոր հոգիս կը խնդրէ,
 Վանդի առջևնին զԱստուած չդրին :
- 3 Ահա Տէր Աստուած է ինձ օգնական,
 Փրկիչս է պաշտպան իմին հոգիս .
 Կամքովս ես կ'ընեմ քեզ զոչ օրհուսն,
 Եւ փառք պիտի տամ որ գուն կ'օրհնես զիս :
- 4 Վանդի ան փրկեց զիս նեղութենէ,
 Իմին թշնամիքս ցրուեց նուաճեց .
 Իմ սիրտըս հիմա կ'ուրախացընէ,
 Վանդի իմ Աստուածս կորուսարս չուզեց :

55 Ս՝արդոց շարութեան համար գրված թիւն . (8) :

- 1 Ո՛վ Տէր Աստուած ձայնիս լսէ,
 Խնդրուածքես քեզ մի՛ ծածկեր .
 Ինձի նայէ պատասխանէ,
 Որ արամութեամբ եմ պաշարուեր :
- 2 Իմ թշնամիս շար խօսքերով ,
 Ինձ նեղութիւն և վիշտ կու տայ .
 Կը հալածէ բարկութիւնով ,
 Հաւ կը գիզէ սրտիս վերայ :

3 Իճ ներսի դիս հոգիս դողաց ,
 Մ'ահուան վախեր վերաս եկան ,
 Ս'ախ՝ դող հասաւ իմին վերաս ,
 Սոսկուճ՝ սարսափ խիստ աւելցան :

4 Ո՛հ ուր էր որ աղաւնիի
 Թաշող թևեր ունենայի .
 Որ անապատն ես փախչէի ,
 Եւ իճ հանգիստս հոն դանէի :

5 Օ՛ի քաղաքին մէջ միշտ տեսայ ,
 Կրօխ՝ շարիք և բանութիւն .
 Գիշեր ցորեկ ասոնց վերայ ,
 Հոն կը խորհին պարք շարերուն :

6 Իսկ ես զ՛ստուած պիտի կանչեմ ,
 Ու Տէրքս իս պիտի փրկէ .
 Ես անդադար պիտի խնդրեմ ,
 Եւ իճ ձայնիս պիտի լսէ :

56 Տէրը եւ Ժողովուրդը երեւոյ Բշտ .
 Բնեւեհն կը պաշտպանէ . (8) :

1 Ո՛վ Տէր Մտուած ինձ ողորմէ՛ ,
 Քանզի շար մարդ դիս կը կլէ .
 Թշնամիներս իս կը նեղեն ,
 Ս'արանչելով ամէն ատեն :

- 2 Սխիցած ատենս քեզ կը դիմեմ ,
 Ու քու Սուրբ Խօսքդ պիտի գովեմ ,
 Վեզ յուսալով ես շեմ վախնար ,
 Ինձ փնտսել մարդ չկրնար :
- 3 Ես աներկբայ աղէկ գիտեմ ,
 Որ երբ զՄատուած ես կը կանչեմ .
 Իմ թշնամիս ետ կը դառնայ ,
 Վանգի Մատուած իմ հետս կ'ըլլայ :
- 4 Ես Մատուծով պիտի գովեմ ,
 Իրեն անսուտ Խօսքերն վրսեմ .
 Ո՛վ Տէր ուխտերդ իմ վրաս առի ,
 Արտանց կու տամ ես փառք քեզի :
- 5 Տէր՝ փրկեցիր զիս շար մահէն ,
 Ոտքերըս ալ վար իյնալէն .
 Որ քու առջիդ միշտ պառտիմ ,
 Եւ կենդանեաց լուսովն հրճուիմ :

57 Տէրը Էր Փրկիչ . (8) :

- 1 Ինձ ողորմէ՛ , ո՛վ Տէր Մատուած ,
 Ինձ ողորմէ՛ Փրկիչ գթած .
 Հոգիս քեզի կ'ապաւինի ,
 Ս'ինչև ամէն փորձանքն անցնի :

2 Լարձրեալ Մատուածն ես կը կանչեմ ,
Փրկիչ Տէրոջս ես կը գիմեմ .

Ըն երկինքէն պիտի խրկէ ,
Ու ոտխէս պիտի փրկէ :

3 Ողորմութիւնն պիտի խրկէ ,
Ճշմարտութիւնն պիտի յայանէ .

Պիտի ընէ միշտ խայտառակ ,
Ինձ դէմ զընօղ չարն անառակ :

4 Ո՛վ Տէր՝ երկինք դուն բարձրացիր ,
Փառքդ տարածուի ամէն երկիր .

Վու սուրբ անունդ մարդիկ ճանչնան ,
Երկիրպագու քեզի ըլլան :

5 Պատրաստ է սիրտս փրկիչ Մատուած ,
Վեղ օրհնելու՝ զի ես գիծած .

Չարթիր քընարս սաղմասարանս ,
Հիւսել Տէրոջս երգ օրհնութեանց :

58 Ս'եղաւորներուն շարուիւնը ե՛ր-
նանց պատիժը . (8 + 6) :

1 Ս'եղաւորները հեռացան ,
Իրենց մօրն արգանդէն .

Սուս խօսելով մոլորեցան ,
Իրենց ծնած օրէն :

2 Մտիկ չընող խուլ օձերուն ,
Վիճան է թոյներնին .

Որ չեն լսեր՝ շատ իմաստուն
Թողչաց ազգու ձայնին :

3 Ո՛վ Տէր Մտաուած՝ անոնց ահաան
Փշրէ դուն , կտարբաէ .

Երբ նեաներնին քաշել ցանկան ,
Օ՛անոնք դուն ջախջախէ :

4 Մարդ թող ըսէ , իրացընէ

Մրդարներուն վարձ կայ .

Եւ կայ Մտաուած՝ որ կը գատէ
Մարդիկ երկրի վերայ :

59 Եւեղ-Էեան Տէր ազօր . (10) :

86

1 Մտաուած փրկէ զիս թշնամիներէս ,
Ս ըրաս ելլողէն դուն իս բարձրացուր .
Չարագործներէն դուն իս ազատէ ,
Մրեան ծարաւի մարդէն հեռացուր :

- 2 Հոգիս բռնելու դարան գործեցին ,
 Աւժով մարդիկներ վերաս դիզուեցան ,
 Երբ մեզք շունեի ինծի դէմ դրին ,
 Այլ Տէր արթնցիր՝ եղիր ինձ պաշտպան :
- 3 Բայց դուն անոնց վրայ Տ՛ր իմ՝ կը խնդաս ,
 Չար հեթանոսներն պիտի ծաղր ընես .
 Վանզի ես բեզի եմ ապաւիւած ,
 Ինծի օգնութիւն պիտի հասցընես :
- 4 Եւ ես զօրութիւնդ պիտի միշտ երգեմ ,
 Աւ ողորմութեամբդ պիտի ես ցնծամ .
 Օ՛ր դուն ես հոգւոյս փրկիչը վսեմ ,
 Ըմուր ապաւէն երբ մեծ վիշտ կը զգամ ,

60 Եւրեւել հոգիին ողորմութիւն . (8) :

- 1 Այլ Տէր Ըստուած՝ մեզ ես ձգած ,
 Բարկանալով մեզ ես ցրուած .
 Երբէն դարձիր ու մեզ ժողովէ ,
 Արչափ որ մեզ ես բաժանած :
- 2 Դուն խստութիւն մեզ ցուցուցիր ,
 Եղի գինի մեզ խմցուցիր .
 Ճշմարտութիւնդ հաստատելու ,
 Չեռուրներնիս գրոշակդ տուիր :

3 Սիրելիներդ թող փրկուին ,
 Վաւ երեսիդ լուսոյն ապրին .
 Վաւ աջ ձեռքովդ մեզ ապրեցուր ,
 Եւ միշտ լսէ մեր աղօթքին :

4 Երբոր նեղուինք օգնէ մեզի ,
 Վանզի փուճ են մարդիկ երկրի .
 Վեզմով կ'ընենք մենք քաջութիւն ,
 Դուն թշնամին կոխես պիտի :

61 Հասարակութիւն յոյսը Լուսարձայ ձե-
 րայ հասարակութիւն է . (10) :

1 Ո՛վ Տէր իմ Լսաուած՝ ձայնիս դուն լսէ ,
 Սիրաք դիւր աղօթքիս՝ ինծի ողորմէ՛ ,
 Երկրիս ծայրերէն քեզի կը կանչեմ՝ ,
 Ինծմէ բարձր վէմին ինձ առաջնորդէ :

2 Ես Տէր քաւ տաճարդ պիտի բընակիմ ,
 Պիտի թևերուդ շուքին տակ նստիմ .
 Վանզի դուն եղար ինծի աշտարակ ,
 Ար ես թշնամուոյս ձեռքէն ազատիմ :

3 Եւ դուն ո՛վ Փրկիչ՝ ուխտերս լսեցիր ,
 Ինծի մեծամեծ բարիք հասուցիր .

Եւ քու անունէդ երկրնչողներուն ,
 Դառանգութիւններն ինձ պարգևեցիր :

4 Ես քու անունիդ՝ մինչև յաւիտեան
 Պիտի միշտ երգեմ սաղմոս օրհնութեան ,
 Եւ ես ամէն օր ուխտերս կատարեմ ,
 Արձօք խոստացայ քեզ 'ի նեղութեան :

62 Լսառուած արդար Գագառու է . (10) :

1 Ընչուչա իմ հոգիս Տէրօջ կը սպասէ ,
 Օ, ի իմ փրկութիւնս միայն իբժէն է .
 Ընչուչա ան է ինձ վէժ և փրկութիւն ,
 Հոգւոյս ապաւէն միայն Լսառուած է :

2 Ընէն ժամանակ Տէրօջն յուսացէք ,
 Չեր սիրար անոր առջին թափեցէք .
 Վանզի Եհովան է մեզ ապաւէն ,
 Սիայն Լսառուած շնորհք խնդրեցէք :

3 Ուամիկ մարդիկներն փուճ են և ունայն ,
 Եւ սուս է ամէն մարդ աղնուական .
 Ընէն ալ թեթեւ են փուճ բաներէն ,
 Երբոր կշռուին շափովն ուղղութեան :

- 4 Իրնաւ մի՛ յուսաք շար զբկողութեան ,
 Եւ յոյս մի՛ դնէք յափշտակութեան .
 Չեր հարբստութիւնն թէ և խիստ շատնայ ,
 Աիրա մի՛ դնէք դուք երբէք անոր վրան :
- 5 Վանզի զօրութիւն կու գայ Մտաուծմէ ,
 Ողորմութիւնն ալ իրմէն միշտ կ'իջնէ .
 Եւ մէն մարդ իրեն գործքին համեմատ ,
 Երգար հատուցում և վարձք մը կ'առնէ :

63 Ե.ստու-ծոյ լեոյ խնիւր . (8) :

- 1 Դուն ես խին Մտաուածս ո՛վ Տէր ,
 Վեզ կը փնտռեմ ցորեկ գիշեր .
 Հոգւով՝ մարմնով քեզ կը ծարուիմ ,
 Օ՛ր աս շոր տեղս ջուր շեմ գաներ :
- 2 Ո՛վ Տէր՝ միշտ քեզ պիտի գովեմ ,
 Չեղբերս քեզի կը վերցընեմ .
 Վեզ կը յիշեմ մահճիս մէջն ալ ,
 Կիշերն վերադ կը մտածեմ :
- 3 Վանզի եղար ինձ օգնական ,
 Երբ յոյս դրի քու սուրբ անուան .
 Խեղցըդ տակ ուրախացաւ .
 Հոն իմ ոսկերքս հանգիստ գտան :

- 4 Թանջ իմ հոգիս քեզ հետևի ,
 Վու օրենքիդ հընադանգի •
 Օջրեղ ձեռքովդ զիս միշտ պահէ ,
 Որ թշնամի ինձ չդպչի :

64 Աստուած շարիքդ դեմի տուէ • (8) :

- 1 Ո՛վ Տէր Աստուած՝ ձայնիս լսէ ,
 Կանգառներուս մտիկ ըրէ •
 Ենօրինաց շար ժողովքէն ,
 Թշնամիին վախէն փրկէ :
- 2 Ենոնք շարիք միշտ կը փնտռեն ,
 Ուղածներնիս ըրինք կ'ըսեն •
 Բրածներնիս Տէրն չտեսներ ,
 Իրենց մտքովն միշտ կը զուրցնեն :
- 3 Բայց Տէր Աստուած՝ զանոնք շուտով
 Պիտի զարնէ իրեն նետով •
 Եմէն տեսնող պիտի փախչի ,
 Երբ պատժուին իրենց մեղքով :
- 4 Բոլոր մարդիկ պիտի վախնան ,
 Եւ արդարներն պիտի խնդան •
 Տէրոջը գործն պիտի պատմեն ,
 Եւ մեծ փրկչին պիտի փառք տան :

65 Աստուծոյ շնորհս իր Բարեխնէրով
 իւր լէցունէ . (11) :

- 1 Ո՛վ Տէր՝ օրհնութիւն կը սպասէ միշտ քեզի ,
 Վեզի նաև ուխտ պիտի միշտ կատարուի .
 Ո՛վ դուն աղաչանք և աղօթք լսող Տէր ,
 Վեզի գայ ամէն մարմին ու փրկուի :
- 2 Այո՛ երանի անոր որ դուն կ'ընտրես ,
 Ու ան հիմակուց քեզ կը մօտեցունես .
 Որ քու սրբահիգ մէջ ան միշտ բընակի ,
 Եւ քու տաճարիդ բարեբօյն լեցունես :
- 3 Երկրին տես կ'երթաս որ արտերն ուռցես ,
 Եւ պարգևներովդ ան միշտ զարգարես .
 Կը կակուղցունես ան առատ անձրևով ,
 Անոր բոյսերն ալ սուրբ բերնովդ կ'օրհնես :
- 4 Դուն կը պսակես բարութեամբդ տարին ,
 Պարարտութիւններ շաւիղէդ կը կաթին .
 Չոր անապատներն կը պծնին արօտով ,
 Լոյսը բլլուրներ ցնծումով կը լեցունին :

66 Աստուծոյ իր ժողովուրդը հշտ իւր
 պաշտպանէ . (11) :

- 1 Ո՛վ դուք տիեզերք՝ մեծ ուրախութիւնով
 Տէրովը առջին միշտ աղաղակեցէք .

Ընտր անունին սաղմոսներ երգելով ,

Եւ իր օրհնութիւնն փառաւոր միշտ ըրէք :

2 Ըսէք Ըստուծոյ՝ թէ ինչպէս ահաւոր
Քուկին գործքերդ են և հրաշքներդ
անհուն .

Վեղմէ վախնալով թշնամիքդ բոլոր ,

Պիտի քեզ ընեն կեղծաւոր հըլութիւն :

3 Պիտի ամէն մարդ քեզ պաշտէ ու Վճ .

Եւ միշտ քու անունդ ալ ընէ փառաւոր .

Թող գան և տեսնեն Տէրոջ գործն
գերապանծ ,

Օյ ան իր գործքովն է անոնց ահաւոր :

4 Չորցուց ծովն անցուց ժողովուրդը ոտքով ,

Ու ծովն ամենուն յաւիտեան կը տիրէ .

Վճ պաշտեցէք՝ օրհնեցէք ան սրաով ,

Օյ ան մեր հոգին կենդանի կը պահէ :

5 Տաճարդ զոհերով աղօթքով մտնեմ ես ,

Վճէն իմ ուխտերքս քեզի կատարեմ .

Որոնք նեղութեանս խոստացայ քեզի ես ,

Տէր զիս ընդունէ՝ երբ ընծաս կը բերեմ :

6 Եկէք՝ ընցէք Մատուծմէ վախցողներ ,
 Եւ ես ձեզ պատմեմ ինչ ըրաւ իմ անձիս :
 Օրհնեալ ըլլայ միշտ մեր Մծն ու մեր Տէր ,
 Ողորմութիւնով ինք ընց աղօթքիս :

67 Մտո՛ւմէ լեցողները օրհնեալ են •
 (8) :

1 Մատուծ գթա՛ւ, ու մեզ օրհնէ ,
 Լոյսդ երեսաց մեր վրայ ծագէ •
 Եւ փրկութեան ուղիդ ճամբան ,
 Մէն ազգ թո՛ղ շուտ ճանաչէ :

2 Տէր՝ քեզ փառք տան ժողովուրդներ ,
 Եւրասիանան՝ ցնծան ազգեր •
 Օխ դուն շիտակ պիտի դատես ,
 Եւ աջնորդես ազգաց ո՛վ Տէր :

3 Երկիրն պառւղ պիտի բերէ ,
 Եւ մեր Մատուծն զմեզ օրհնէ •
 Եւ աշխարհիս ամէն ծայրեր ,
 Պիտի դողան՝ վախնան անկէ :

68 Մտո՛ւմէ զօրաւոր է իր ժողովուրդը
 պաշտպանելու • (11) :

1 Թո՛ղ Տէրը ելլէ՛ թշնամիք թո՛ղ ցրուին ,
 Եւ զինք առողներն երեսէն թո՛ղ փախչին •

- Օւնոնք փախցուր Տէր՝ որ ցրուին մու-
խի պէս ,
Եւ քու երեսէդ թող հալին՝ կորսուին :
- 2 Սակայն արդարներն միշտ ուրախ թող
լլան ,
Տէրոջ առջին թող ցնծան ու խնդան ,
Սաղմոս երգեցէք անոր սուրբ անունին ,
Պատրաստ ըէք մեր Մ.Յ սուրբ ճամբան :
- 3 Ո՛վ Տէր փրկիչ մեր՝ երբ առաջնորդեցիր
Ընտրեալ ազգիդ և իր առջևէն գացիր ,
Երկինք շող թափեց Մատուծոյ երեսէն ,
Սինա շարժեցաւ և դողաց մեր երկիր :
- 4 Հազարք հազարաց են Տէրոջ կառքեր ,
Սինա լեռան պէս անոնց մէջ է նստեր .
Ո՛վ Տէր՝ գերութիւնն ալ գերի բանեցիր ,
Սարգոց համար ալ առիւր մեծ պարգևներ :
- 5 Օրնեալ ըլլայ Տէրն որ մեզ միշտ կը յիշէ ,
Եւ բանաւորին ձեռքէն մեզ կը փրկէ .
Ըն է Տէր Մատուած և փրկիչ թագաւոր ,
Սահուան խայթոցն ալ ան կը քաղց-
րացունէ :

- 6 Մհեր եւ Մատուած՝ Մատուած Իսրայէլի ,
 Քու սք տաճարիդ մէջ եւ միշտ գովելի •
 Քանզի դուն կու տաս քուկին ժողո-
 վուրդիդ :
 Այժ , կարողուի , որպէս՝ զի հաստատուի :

69 'Նեղու-է-ան Ռզ արգիւ • (8) :

- 1 Օխ ապրեցնւր ու Տէր Մատուած ,
 Քանզի ջուրերն անձիս հասան •
 Խորունկ ցեխի մէջ եմ ինկած ,
 Եւ հեղեղներ զիս կուլ կու տան :
- 2 Քեզ յուսացողք թող շամշնան ,
 Այ Տէր Փրկիչ՝ Տէր զօրութեանց •
 Քեզ խնորոզներն հաստատ ման ,
 Այ Երկնաւոր և Սուրբ Մատուած :
- 3 Տնւր պատասխան ինձի ու Տէր ,
 Օխ դուն գթած եւ յաւիտեան •
 Երեսդ ինձմէ Տէր մի ծածկեր ,
 Օխ եմ ինկած 'ի ներութեան :
- 4 Մնունդ երգով գովեմ պիտի ,
 Բարձրացունեմ ամէն ասնն •
 Օխ ան է քեզ ընդունելի ,
 Օւարակին՝ Եզին զոհէն :

5 Երկինք՝ երկիր՝ գովեն թող Տէրն ,
 Օխ ինք Սիօնն պիտի փրկէ .
 Եւ իր անունը սիրողներն ,
 Հոն յաւիտեանս պիտի պահէ :

70 'Նեղեալ հոգւոյն աղօթք . (8 + 6) :

1 Ո՛վ Տէր փրկիչ՝ դուն արարցիւր ,
 Օտառադ շուտ փրկելու .
 Աստուած իմ՝ ինձ շուտով հասիր ,
 Հոգիս ազատելու :

2 Իմ կեանքս փնտռող չար մարդիկներ ,
 Թող ամօթով մնան .
 Չար կամեցող անօրէններ ,
 Թող կորագլուխ ըլլան :

3 Հնծու թիւնով՝ քեզմով խնդայ
 Ամէն քեզ յուսացողն .
 Եւ միշտ ըսէ՝ Տէրն մեծանայ ,
 Վու փրկութիւնդ սիրողն :

71 'Նեղութեան Թէ՛ղ հաւատացեալը Աս-
 րու՛տոյ ին յո՛ւսոյ . (10) :

1 Ո՛վ Տէր իմ Աստուած՝ քեզի յուսացայ ;
 Որ ես յաւիտեան բընաւ չամչնամ .

Վու արդարութեանդ ես միշտ ցանկացայ ,
Որ իմ փրկութիւնս շուտով ես գտնամ :

2 Վու գովութիւնովդ լեցուի թող բերանս ,
Վեզի փառք տալով երգեմ ամէն օր ,
Դուն իս մի՛ ձգեր իմին ծերութեանս ,
Երբ ոյժքս պակսի , Տէր իս մի՛ թողուր :

3 Օյ իմ թշնամիքս չար խօսք կը զուրցնն ,
Խորհուրդ ընօղներ՝ ըսօղներ ալ կայ .
Թէ Տէր Լստուածն ան ձգեց երեսէն ,
Ուտի հալածենք , փրկող մը չկայ :

4 Բայց ես քու սիրոյդ պիտի միշտ յուսամ ,
Եւ քեզ փառք տալով ամէն ժամ երգեմ .
Շնորհացող համար միշտ փառք պիտի
տամ ,
Ընթիւ ըլլալին՝ Տէր ես լաւ գիտեմ :

5 Վու արդարութիւնդ շատ բարձր է ո՛վ Տէր ,
Չկայ քեզի պէս՝ զի մեծ բան ըրիր .
